Ա Ռ Ա Ր Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 1-Ի ԹԻՎ ԹԻՎ 52-Ն-56-Ն ԵՎ 56-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Թիվ 52-Ն-55-Ն որոշումները նորմատիվ բնույթի դրույթներ չեն պարունակում: Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասի՝ «Ն» (նորմատիվ) տառով նշում կատարելու անհրաժեշտություն չկա:

Թիվ 55-Ն որոշմանը կից ներկայացված հողային ֆոնդի հաշվետվության ձևի վերևի աջ անկյունում անհրաժեշտ է նշել «Հավելված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 2021 թվականի հուլիսի 1-ի թիվ 55-Ն որոշման» գրառումը: Բացի այդ, որոշմամբ հաստատված համայնքի հողային ֆոնդի հաշվետվության թվային տվյալները չեն համապատասխանում ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի հետ համաձայնեցված թվային տվյալներին /կցվում է ճշգրտված թվային տվյալները/:

Թիվ թիվ 56-Ա և 56-Ն որոշումները նույնաբովանդակ են և պարունակում են նույն իմաստներով դրույթներ:

Թիվ 56-Ա որոշումը չի համապատասխանում «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջին, համաձայն որի՝ նորմատիվ իրավական ակտում փոփոխություն կամ լրացում կարող է կատարվել միայն նույն տեսակի և բնույթի նորմատիվ իրավական ակտով:

Թիվ 56-Ն որոշման մեջ չեն պահպանվել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 8-րդ մասի (հղում կատարելիս նորմատիվ իրավական ակտի լրիվ անվանումը հիշատակվում է նորմատիվ իրավական ակտում փոփոխություններ կամ լրացումներ նախատեսող կամ նորմատիվ իրավական ակտի գործողությունը դադարեցնող ակտում) և 18-րդ հոդվածի 6-րդ մասի (ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի կրճատ անվանումը հիշատակելիս դրանում հետևյալ հաջորդականությամբ ներառվում են այդ ակտն ընդունող մարմնի անվանումը, ընդունման տարին, ամիսը, ամսաթիվը, ակտի հերթական համարը, բնույթը և տեսակը) պահանջները:

Կատարող՝ Նաիրա Մարտիրոսյան
06.08.2021թ.